

ք. Երևան

20-ը մայիսի 2017թ.

« Հաշտականության նախարարությունը, ի դեմս « Հաշտականության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետի ՊԺԿ Կ. Կարապետյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Պատվիրատու, մի կողմից և «ԼԱՎ ԸՆԿԵՐ» ՍՊԸ-ն՝ ի դեմս ընկերության տնօրեն Վ. Համբարձումյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Կատարող, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

**1. Պայմանագրի առարկան**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է հատուկ ինժեներական տեխնիկայի վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատուց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագրին և գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ անանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

### **3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ**

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 4) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 4.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները: Ընդ որում Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից տրված՝ պայմանագրի կամ դրա մի մասի կատարման վերաբերյալ բացասական եզրակացությունը և չհաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 2 օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

### **4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ**

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության առավելագույն գինը կազմում է 35 000 000 (երեսունհինգ միլիոն) ՀՀ դրամ /ընդ որում՝ ծառայությունների մասով ԱԱՀ նախատեսված չէ, իսկ ծառայությունների ընթացքում օգտագործվող պահեստամասերի մասով ԱԱՀ նախատեսված է/ : Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում՝ հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցված Ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ այն երկկողմ հաստատելու պահից՝ 15 բանկային օրվա ընթացքում՝ Պայմանագրի վճարման ժամանակացուցով՝ հավելված N 3-ով, նախատեսված ժամանակահատվածում, սակայն ոչ ուշ քան 2016թ. դեկտեմբերի 25-ը:

### **5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական քննության հիման վրա չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները կատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տոյժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## **6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)**

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, քրիեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## **7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.5 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.6 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կատարողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է [www.gnumner.am](http://www.gnumner.am) հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.7 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.8 Սույն պայմանագիրը կազմված է 46 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N2, N3 և N4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.9 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.10 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.11 Սույն պայմանագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՋՌԻ ինժեներական զորքերի վարչությունը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն  
ք. Երևան Բազրևանդի 5  
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն  
Հ/Հ 900011144079  
ՀՎՀՀ 00867415

ՀՀ պաշտպանության նախարարության  
Տնօրենի օրինակների պետի ՊԺԿ




Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

### ԿԱՏԱՐՈՂ

«ԼԱՎ ԸՆԿԵՐ» ՍՊԸ  
ք. Կապան, Շահումյան 19/40  
«Անելիք Բանկ» ՓԲԸ  
Հ/Հ 11800072752900  
ՀՎՀՀ 09414681

տնօրեն

Վ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ



**ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ**

Հ/Հ	<b>2. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ</b> Ոչ էլեկտրական մեքենաների վերանորոգման և պահպանման ծառայություններ (հատուկ ինժեներական տեխնիկայի վերանորոգման ծառայության ձեռքբերում) այդ թվում՝	<b>ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ</b>
-----	--	--

Հ/Հ	Հատուկ ինժեներական տեխնիկա	Տեխնիկական ցուցանիշներ
1	ԿՌԱԶ 255 (ՏՄՄ-3), ԿՌԱԶ 260 (ՏՄՄ-3Մ), ԿՌԱԶ 256 և ԷՕՎ-4421 մեքենաների վերանորոգման ծառայություններ	Վերանորոգումն ըստ ԿՌԱԶ 255 (ՏՄՄ-3), ԿՌԱԶ 260 (ՏՄՄ-3Մ), ԿՌԱԶ 256 և ԷՕՎ-4421 արտադրող ձեռնարկությունների նկարագրության և շահագործման հրահանգների Համաձայն ԿՌԱԶ 255 (ՏՄՄ-3), ԿՌԱԶ 260 (ՏՄՄ-3Մ), ԿՌԱԶ 256 և ԷՕՎ-4421 արտադրող ձեռնարկությունների (ՏՄՄ-3Մ1.00.00.000 ՏՕ-ԼՈՒ) շահագործման նորոգման ձեռնարկների

**Ծանոթություն.**

- Հիմնական նորոգում անցած շարժիչները, փոխանցման տուփերը և կամրջակները պետք է կապարակնքվեն ընկերության կողմից և տրվեն 20 000կմ կամ 2 տարի երաշխիքային շահագործման ժամկետներ (որը գործում է մինչև պայմաններից մեկի ավարտը),
- փոփոխված հանգույցների շահագործման երաշխիքային ժամկետը՝ 5000կմ, կամ 500մեք./ժամ
- հիմնական նորոգում անցած ագրեգատներին տրված երաշխիքային ժամկետները գործելու են վերանորոգման ընկերության կողմից հաստատված երաշխիքային գրքույկներում նշված ցուցանիշների պահպանման դեպքում,
- վերանորոգման ենթակա տեխնիկան տրամադրվում է ՀՀ ՋՈՒ ԻԶՎ-ի կողմից (տեղափոխումը մինչև ընկերություն),
- փոխարինված ագրեգատները և պահեստամասերը (բացառությամբ ցածրարժեք արագամաշ պահեստամասերի) պետք է հանձնվեն ՀՀ ՊՆ թիվ 13516 զորամասի պահեստ (ք.Էջմիածին Իսիկ-Մուսիկոյի 7)
- վերանորոգող ընկերությունը պետք է գտնվի ք.Երևանից ոչ հեռու 50 կմ-ից:


Նորոգման ենթակա ավտոտեխնիկայի և ագրեգատների արատավորումը պետք է կատարվի ստացումից 15 օրյա ժամկետում, իսկ վերանորոգումը՝ արատավորումից հետո երկկողմանի կազմված ժամանակացույցի համաձայն:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

**ԿԱՏԱՐՈՂ**


ՀՀ պաշտպանության նախարարություն  
ք. Երևան Բազրկանդի 5  
ՀՀ ՖՆ աշխարհային առևտրային գործառնական վարչություն  
ՀՀ 900011144079  
ՀՀ ՀՀ 00867418  
ՀՀ պաշտպանության նախարարության  
ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԵՎ

«ԼԱՎ ԸՆԿԵՐ» ՍՊԸ  
ք. Կապան, Շահումյան 19/40  
«Անեյիք Բանկ» ՓԲԸ  
Հ/Հ 11800072752900  
ՀՎՀՀ 09414681



Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

տնօրեն



ID 002902773

**ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**

Հ/Հ	ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ հատուկ ինժեներական տեխնիկայի վերանորոգում, այդ թվում՝	Չ/մ	Միավորի գինը ՀՀ դրամ
<b>I ԵԱՐԺԻՉ</b>			
1	Շարժիչի ապամոնտաժում և մոնտաժում /ԿՌԱԶ-260/	հատ	80000
2	Շարժիչի ապամոնտաժում և մոնտաժում /ԿՌԱԶ-255, 256/	հատ	60000
3	Շարժիչի կազմաքանդում և արատավորում /ԿՌԱԶ-260/	հատ	70000
4	Շարժիչի կազմաքանդում և արատավորում /ԿՌԱԶ-255, 256/	հատ	50000
5	Շարժիչի բլոկի զեյում	հատ	25000
6	Շարժիչի բլոկի մաքրում և ներկում	հատ	20000
7	Շարժիչի բլոկի ներտաշում	հատ	120000
8	Շարժիչի բլոկի վերանորոգում	հատ	120000
9	Շարժիչի բլոկի փոխարինում	հատ	5000
10	Շարժիչի բաղկացուցիչ հանգույցների լվացում	հատ	20000
11	Շարժիչի հավաքում /ԿՌԱԶ-260/	հատ	80000
12	Շարժիչի հավաքում /ԿՌԱԶ-255, 256/	հատ	75000
13	Շարժիչի բլոկի դիմացի կախարիչի փոխարինում	հատ	3000
14	Շարժիչի ռեզինտեխնիկական պատրաստվածքների /միջադիրներ, խցիչներ/ փոխարինում /ԿՌԱԶ-260/	հատ	4000
15	Շարժիչի ռեզինտեխնիկական պատրաստվածքների /միջադիրներ, խցիչներ/ փոխարինում /ԿՌԱԶ-255, 256/	հատ	4000
16	Շարժիչի հիմնական և շարժաթևային ներդրակների փոխարինում	հատ	7000
17	Շարժիչի 1 կոմպլեկտ գլանի, մխոցի, մխոցամատի, մխոցային օղերի փոխարինում	հատ	5000
18	Շարժիչի 1 հատ շարժաթևի փոխարինում	հատ	3000
19	Շարժիչի 1 հատ շարժաթևի ականոցի փոխարինում	հատ	4000
20	Շարժիչի յուղի պոմպի զեյում	հատ	15000
21	Շարժիչի յուղի պոմպի վերանորոգում	հատ	20000
22	Շարժիչի յուղի պոմպի ապամոնտաժում և մոնտաժում	հատ	8000
23	Շարժիչի քարտերի փոխարինում	հատ	5000
24	Շարժիչի 1 հատ գլխիկի կախարիչի փոխարինում	հատ	2000
25	Շարժիչի 1 հատ գլխիկի փոխարինում	հատ	12000
26	Շարժիչի 1 հատ գլխիկի վերանորոգում	հատ	40000
27	Շարժիչի գլխիկի 1 հատ փականի փոխարինում	հատ	1000
28	Շարժիչի բաշխիչ լիսեռի փոխարինում	հատ	5000
29	Շարժիչի բաշխիչ լիսեռի 1 հատ ականոցի փոխարինում	հատ	12000
30	Շարժիչի բաշխիչ լիսեռի 1 հատ հրիչի փոխարինում	հատ	300
31	Շարժիչի ծնկաձև լիսեռի ապամոնտաժում և մոնտաժում	հատ	12000
32	Շարժիչի ծնկաձև լիսեռի առամասնիկի փոխարինում	հատ	2000
33	Շարժիչի ծնկաձև լիսեռի հղկում	հատ	25000
34	Շարժիչի ծնկաձև լիսեռի ողորկում	հատ	15000
35	Շարժիչի ծնկաձև լիսեռի ստուգում, զեյում	հատ	10000
36	Շարժիչի ծնկաձև լիսեռի առանցքակալի փոխարինում	հատ	500
37	Շարժիչի ծնկաձև լիսեռի առանցքակալի վերևի և ներքևի կիսաօղերի փոխարինում	հատ	500
38	Շարժիչի գլխավոր փոկանիկի փոխարինում	հատ	700

39	Տուրբոկոմպրեսորի ապամոնտաժում և մոնտաժում	հատ	15000
40	Շարժիչի 1 հատ արտածող կոլեկտորի փոխարինում	հատ	5000
41	Շարժիչի ցրի /աջ, կամ ձախ/ խողովակի փոխարինում	հատ	4000
42	Շարժիչի ներածող կոլեկտորի փոխարինում	հատ	3500
43	Շարժիչի ներածող կոլեկտորի միացման խողովակառուտի փոխարինում	հատ	4000
44	Թափանիվի ապամոնտաժում, մոնտաժում	հատ	7000
45	Թափանիվի առամնավոր օղազտիի փոխարինում	հատ	5000
46	Շարժիչի թափանիվի քարտերի փոխարինում	հատ	10000
47	Շարժիչի նախաթողարկման տաքացման պոմպային ազրեզատի փոխարինում	հատ	15000
48	Շարժիչի նախաթողարկման տաքացման կաթալի փոխարինում	հատ	5000
49	Շարժիչի նախաթողարկման տաքացման վառելիքի փոքր բացի փոխարինում	հատ	4000
50	Շարժիչի նախաթողարկման տաքացման լցման ծագարի փոխարինում	հատ	2000
51	Շարժիչի նախաթողարկման տաքացման սարքի 1 հատ խողովակի փոխարինում	հատ	500
52	Շարժիչի նախաթողարկման տաքացման սարքի 1 հատ ճկափողի փոխարինում	հատ	500
53	Շարժիչի յուղի կոշտ մաքրման գտիչի փոխարինում	հատ	3500
54	Շարժիչի յուղի կոշտ մաքրման գտիչի թասակի փոխարինում	հատ	500
55	Շարժիչի յուղի կոշտ մաքրման գտիչի էլեմենտի փոխարինում	հատ	300
56	Շարժիչի յուղի նուրբ մաքրման գտիչի փոխարինում /ԿՌԱԶ-260/	հատ	3000
57	Շարժիչի յուղի նուրբ մաքրման գտիչի թասակի փոխարինում /ԿՌԱԶ-260/	հատ	500
58	Շարժիչի յուղի նուրբ մաքրման գտիչի էլեմենտի փոխարինում /ԿՌԱԶ-260/	հատ	300
59	Շարժիչի յուղի կենտրոնախույս մաքրման գտիչի փոխարինում	հատ	4000
60	Շարժիչի յուղի կենտրոնախույս մաքրման գտիչի սպասարկում	հատ	3000
61	Տուրբոկոմպրեսորի գտիչի փոխարինում	հատ	3000
62	Տուրբոկոմպրեսորի գտիչի թասակի փոխարինում	հատ	500
63	Տուրբոկոմպրեսորի գտիչի էլեմենտի փոխարինում	հատ	300
64	Յուղի ռադիատորի փոխարինում	հատ	10000
65	Շարժիչի յուղի մակարդակի ցուցիչի փոխարինում	հատ	300
66	Շարժիչի յուղի մակարդակի ցուցիչի խողովակի փոխարինում	հատ	700
67	Ուժային ազրեզատի կախոցի առջևի բարձակի փոխարինում	հատ	2500
68	Ուժային ազրեզատի կախոցի 1 հատ /աջ կամ ձախ/ բարձակի փոխարինում	հատ	2500
69	Ուժային ազրեզատի կախոցի 1 հատ բարձիկի փոխարինում	հատ	1000
70	Շարժիչի 1 հատ փոկի փոխարինում	հատ	500
71	Շարժիչի փորձարկման ծառայություն	հատ	60000
<b>II Մուուցման համակարգ</b>			
72	Վառելիքի բացի ապամոնտաժում, մոնտաժում	հատ	5000
73	Վառելիքի 1 հատ բացի վերանորոգում	հատ	15000
74	Վառելիքի 1 հատ բացի մաքրում և ներկում	հատ	6000
75	Վառելիքի բացի ամրացման 1 հատ բարձակի փոխարինում	հատ	2000
76	Վառելիքի բացի ամրացման 1 հատ միջադիրի փոխարինում	հատ	500
77	Վառելիքի բացի ամրացման 1 հատ ամրակապ փոխարինում	հատ	1000
78	Վառելիքի բացի մղիչի փոխարինում, ներառյալ մղիչը	հատ	3000
79	Լրացուցիչ բացի մղիչի փոխարինում	հատ	3000
80	Վառելիքի խողովակալարերի փոխարինում	հատ	45000
81	Վառելիքի 1 հատ խողովակի փոխարինում	հատ	2000
82	Տարաթողման փականի փոխարինում	հատ	500
83	Կոշտ զտման վառելիքի գտիչի փոխարինում	հատ	3000
84	Կոշտ զտման վառելիքի գտիչի բաժակի փոխարինում	հատ	1000
85	Կոշտ զտման վառելիքի գտիչի 1 հատ էլեմենտի փոխարինում	հատ	300

86	Նուրբ զտման վառելիքի զտիչի փոխարինում	հատ	3000
87	Նուրբ զտման վառելիքի զտիչի 1 հատ թասակի փոխարինում	հատ	1000
88	Նուրբ զտման վառելիքի զտիչի 1 հատ էլեմենտի փոխարինում	հատ	200
89	Ցածր ճնշման վառելիքի պոմպի քանդում, զելում և հավաքում	հատ	3000
90	Ցածր ճնշման վառելիքի պոմպի վերանորոգում	հատ	2000
91	Ցածր ճնշման վառելիքի պոմպի փոխարինում	հատ	2000
92	ԲՃՎԱ-ի ապամոնտաժում, մոնտաժում	հատ	15000
93	ԲՃՎԱ-ի ստենդային ստուգում, զելում և սպասարկում	հատ	25000
94	ԲՃՎԱ-ի մասնակի քանդում, զելում, հավաքում, ստենդային ստուգում և կարգավորում	հատ	30000
95	ԲՃՎԱ-ի միջին քանդում, զելում, հավաքում, ստենդային ստուգում և կարգավորում	հատ	40000
96	ԲՃՎԱ-ի ամբողջովին քանդում, զելում, հավաքում, ստենդային ստուգում և կարգավորում	հատ	50000
97	ԲՃՎԱ-ի ընթացիկ նորոգում	հատ	20000
98	ԲՃՎԱ-ի միջին նորոգում	հատ	30000
99	ԲՃՎԱ-ի հիմնական նորոգում	հատ	50000
100	1 հատ բոցամուղի ստենդային ստուգում և կարգավորում	հատ	1500
101	Բոցամուղի փոխարինում	հատ	1500
102	Բոցամուղի 1 հատ փոշարարի փոխարինում	հատ	2000
103	ԲՃՎԱ-ի շարժաքերի փոխարինում	հատ	2000
104	ԲՃՎԱ-ի կցորդիչի փոխարինում	հատ	5000
105	Արագարարի ոտնակի փոխարինում	հատ	3000
106	Ոտնակի կոնկակայի փոխարինում	հատ	1500
107	Արագարարի շարժաքերի լիսեռի բարձակի փոխարինում	հատ	2000
108	Արագարարի ոտնակի ձգածողի փոխարինում	հատ	1500
109	Արագարարի միջանկյալ ձգածողի փոխարինում	հատ	1500
110	Արագարարի 1 հատ երկժանիի փոխարինում	հատ	1000
111	Արագարարի կառավարման կարգավորիչի շարժաքերի լծակի փոխարինում	հատ	2000
112	Օդի զտիչի սպասարկում	հատ	3500
113	Օդի զտիչի 1 հատ էլեմենտի փոխարինում	հատ	500
114	Օդի զտիչի կորպուսի /կախարիչով/ փոխարինում	հատ	2000
115	Օդի զտիչի 1 հատ ճկափողի փոխարինում	հատ	500
<b>III Գազի արտանետման համակարգ</b>			
116	Խլացուցիչի ապամոնտաժում, մոնտաժում	հատ	10000
117	Խլացուցիչի վերանորոգման / զոդման / ծառայություն	հատ	10000
118	Խլացուցիչի մաքրման և ներկման ծառայություն	հատ	13000
119	Խլացուցիչի 1 հատ ընդունման խողովակի փոխարինում	հատ	3000
120	Խլացուցիչի կոմպենսատորի փոխարինում	հատ	3000
121	Օժանդակ արգելակի փոխարինում	հատ	3500
122	Օժանդակ արգելակի գլանի փոխարինում	հատ	2000
123	Օժանդակ արգելակի բարձակի փոխարինում	հատ	1000
124	Խլացուցիչի 1 հատ միջաբերի փոխարինում	հատ	500
125	Խլացուցիչի խամոթի փոխարինում	հատ	1000
<b>IV Հովացման համակարգ</b>			
126	Ռադիատորի ապամոնտաժում, մոնտաժում	հատ	20000
127	Ռադիատորի վերանորոգման ծառայություն	հատ	25000
128	Ռադիատորի կախցի 1 հատ բարձիկի փոխարինում	հատ	500
129	Ռադիատորի կախցի շրջանակի վերանորոգում	հատ	9000
130	Ռադիատորի կախցի շրջանակի փոխարինում	հատ	5000

131	Ռադիատորի կախոցի ներքևի վահանի փոխարինում	հատ	2000
132	Ջրահեռացման խողովակաուստի փոխարինում	հատ	2000
133	1 հատ թերմոստատի փոխարինում	հատ	1000
134	Ռադիատորի շերտափեղկի փոխարինում	հատ	5000
135	Ռադիատորի շերտափեղկի վերանորոգում	հատ	5000
136	Շերտափեղկի կառավարման ձգաձողի փոխարինում	հատ	1700
137	Ընդարձակման բաքի փոխարինում	հատ	2000
138	Ընդարձակման բաքի 1 հատ խողովակի փոխարինում	հատ	500
139	Խառնած ծորակի փոխարինում	հատ	1000
140	Ռադիատորի խցանի փոխարինում	հատ	500
141	Շարժիչի ջրի պոմպի վերանորոգման ծառայություն	հատ	7000
142	Շարժիչի ջրի պոմպի փոխարինում	հատ	3500
143	Հովացման շարժարեղի փոխարինում	հատ	7000
144	Օդափոխիչի թևանիվի փոխարինում	հատ	3500
<b>V Կցորդում</b>			
145	Կցորդիչի հանման և տեղադրման ծառայություն /հանված փոխանցման տուփի/	հատ	5000
146	Կցորդիչի գլխավոր գլանի հանում, տեղադրում	հատ	3000
147	Կցորդիչի գլխավոր գլանի վերանորոգում	հատ	6000
148	Կցորդիչի ոտնակի փոխարինում	հատ	2000
149	Կցորդիչի ոտնակի ստնիի բարձակի փոխարինում	հատ	2000
150	Տարվող սկավառակի փոխարինում	հատ	2000
151	Տարվող սկավառակի զամում	հատ	7000
152	Տանող սկավառակի փոխարինում	հատ	2000
153	Սեղմիչ սկավառակի փոխարինում	հատ	2000
154	Սեղմիչ սկավառակի վերանորոգման ծառայություն	հատ	10000
155	Պնևմոհիդրոուժեղարարի ապամոնտաժում, մոնտաժում	հատ	4000
156	Պնևմոհիդրոուժեղարարի վերանորոգում	հատ	12000
157	Կցորդման երկժանիի փոխարինում	հատ	1700
158	Կցորդման անջատիչի կցորդիչի փոխարինում	հատ	2000
159	Կցորդման անջատիչի զսպանի փոխարինում	հատ	100
160	Կցորդման անջատիչի կցորդիչի յուղման ճկափողի փոխարինում	հատ	300
161	Կցորդման քարտերի փոխարինում	հատ	10000
<b>VI Փոխանցման տուփ</b>			
162	Փոխանցման տուփի ապամոնտաժում, մոնտաժում	հատ	15000
163	Փոխանցման տուփի կազմաքանդում, զեխում, արատավորում /ԿՌԱԶ-260/	հատ	45000
164	Փոխանցման տուփի կազմաքանդում, զեխում, արատավորում /ԿՌԱԶ-255, 256/	հատ	25000
165	Փոխանցման տուփի բաղկացուցիչ հանգույցների վնասում /ԿՌԱԶ-260/	հատ	20000
166	Փոխանցման տուփի բաղկացուցիչ հանգույցների վնասում /ԿՌԱԶ-255, 256/	հատ	15000
167	Փոխանցման տուփի հավաքում /ԿՌԱԶ-260/	հատ	40000
168	Փոխանցման տուփի հավաքում /ԿՌԱԶ-255, 256/	հատ	25000
169	Փոխանցման տուփի քարտերի փոխարինում	հատ	5000
170	Փոխանցման տուփի յուղի պոմպի փոխարինում	հատ	3000
171	Փոխանցման տուփի յուղի պոմպի վերանորոգում	հատ	7000
172	Փոխանցման տուփի առաջնային լիսեռի հետևի առանցքակալի կափարիչի փոխարինում	հատ	3000
173	Փոխանցման տուփի միջակա լիսեռի փոխարինում	հատ	5000
174	Փոխանցման տուփի միջակա լիսեռի 1 հատ առանմանիվի փոխարինում	հատ	3000
175	Փոխանցման տուփի միջակա լիսեռի առանցքակալի փոխարինում	հատ	2000
176	Փոխանցման տուփի առաջնային լիսեռի փոխարինում	հատ	5000

177	Փոխանցման տուփի առաջնային լիսեռի առանցքակալի /կամ սևեռապնդման/ փոխարինում	հատ	2000
178	Փոխանցման տուփի երկրորդային լիսեռի փոխարինում	հատ	5000
179	Փոխանցման տուփի երկրորդային լիսեռի 1 հատ ատամնաձևիլի փոխարինում	հատ	3000
180	Փոխանցման տուփի երկրորդային լիսեռի 1 հատ համաժամիչի փոխարինում	հատ	4000
181	Փոխանցման տուփի երկրորդային լիսեռի 1 հատ ականոցի փոխարինում	հատ	5000
182	Փոխանցման տուփի երկրորդային լիսեռի 1 հատ առանցքակալի փոխարինում	հատ	2000
183	Փոխանցման տուփի հետևի առանցքակալի կախարչի փոխարինում	հատ	2000
184	Փոխանցումների փոխարկման մեխանիզմի փոխարինում	հատ	8000
185	Փոխանցումների փոխարկման մեխանիզմի կախարչի փոխարինում	հատ	5000
186	Փոխանցումների փոխարկման մեխանիզմի երկժանիի փոխարինում	հատ	2000
187	Երկժանիի կոթի գլխիկի փոխարինում	հատ	500
188	Երկժանիի կոթի փոխարինում	հատ	1000
189	Փոխանցումների փոխարկման մեխանիզմի կառավարման շարժաքերի փոխարինում	հատ	10000
190	Միջակա ձգածողի փոխարինում	հատ	2000
191	Փոխանցումների փոխանցման լծակի հենարանով փոխարինում	հատ	2000
192	Փոխանցումների փոխանցման լծակի բռնակի փոխարինում	հատ	500
193	Փոխանցման տուփի ռեզինոտեխնիկական կտրվածքների փոխարինում /ԿՌԱԶ-260/	հատ	3000
194	Փոխանցման տուփի ռեզինոտեխնիկական կտրվածքների փոխարինում /ԿՌԱԶ-255, 256/	հատ	2000
195	Օդի բաժանարարի փոխարինում	հատ	4000
196	Օդի բաժանարարի վերանորոգում	հատ	12000
197	Իջեցնող փոխանցումների քարտերի փոխարինում	հատ	5000
198	Համաժամիչի փոքր տանող սկավառակի փոխարինում	հատ	1000
199	Համաժամիչի փոքր տարվող սկավառակի փոխարինում	հատ	1000
200	Համաժամիչի փոքր սեղմիչ սկավառակի փոխարինում	հատ	2000
201	Հետին ընթացքի ատամնաձևի տնիի փոխարինում	հատ	2000
202	Իջեցնող փոխանցումների միջակա լիսեռի փոխարինում	հատ	5000
203	Իջեցնող փոխանցումների փոխարկման մեխանիզմի փոխարինում	հատ	5000
204	Իջեցնող փոխանցումների փոխարկման մեխանիզմի կախարչի փոխարինում	հատ	4000
205	Իջեցնող փոխանցումների փոխարկման մեխանիզմի երկժանիի փոխարինում	հատ	2000
206	Իջեցնող փոխանցումների փոխարկման մեխանիզմի երկժանիի կոթի գլխիկի փոխարինում	հատ	500
207	Իջեցնող փոխանցումների փոխարկման մեխանիզմի երկժանիի կոթի փոխարինում	հատ	1000
208	Կարդանի միացման կցաշուրթի փոխարինում	հատ	3500
209	Փոխանցման տուփի մաքրում և ներկում /ԿՌԱԶ-260/	հատ	15000
210	Փոխանցման տուփի մաքրում և ներկում /ԿՌԱԶ-255, 256/	հատ	10000
<b>VII Բաշխիչ-բաժանիչ տուփ</b>			
211	Բաշխիչ տուփի ապամոնտաժման և մոնտաժման ծառայություն	հատ	35000
212	Բաշխիչ տուփի կազմաքանդման, զեյման, արատավորման ծառայություն /ԿՌԱԶ-255, 260/	հատ	30000
213	Բաշխիչ տուփի կազմաքանդման, զեյման, արատավորման ծառայություն /ԿՌԱԶ-256/	հատ	20000
214	Բաշխիչ տուփի բաղկացուցիչ հանգույցների մաքրում /ԿՌԱԶ-255, 260/	հատ	15000
215	Բաշխիչ տուփի բաղկացուցիչ հանգույցների մաքրում /ԿՌԱԶ-256/	հատ	10000
216	Բաշխիչ տուփի հավաքում /ԿՌԱԶ-255, 260/	հատ	25000
217	Բաշխիչ տուփի հավաքում /ԿՌԱԶ-256/	հատ	20000
218	Բաշխիչ տուփի կախոցի 1 հատ բարձակի փոխարինում	հատ	3000
219	Բաշխիչ տուփի կախոցի 1 հատ բարձիկի փոխարինում	հատ	500
220	Բաշխիչ տուփի փոխանցումների փոխարկման փականի փոխարինում /ԿՌԱԶ-260/	հատ	3000
221	Բաշխիչ տուփի 1 հատ էլեկտրոմագնիսական փականի փոխարինում /ԿՌԱԶ-260/	հատ	2000
222	Բաշխիչ տուփի փոխանցումների միացման 1 հատ լծակի փոխարինում /ԿՌԱԶ-255, 256/	հատ	2000
223	Բաշխիչ տուփի փոխանցումների միացման 1 հատ լծակի բռնիչի փոխարինում /ԿՌԱԶ-255, 256/	հատ	500
224	Բաշխիչ տուփի փոխանցումների միացման 1 հատ ձգածողի փոխարինում /ԿՌԱԶ-255, 256/	հատ	1500
225	Բաշխիչ տուփի քարտերի փոխարինում /ԿՌԱԶ-260/	հատ	4000
226	Բաշխիչ տուփի առջևի քարտերի փոխարինում /ԿՌԱԶ-255, 256/	հատ	2500
227	Բաշխիչ տուփի հետևի քարտերի փոխարինում /ԿՌԱԶ-255, 256/	հատ	2500

228	Առցանց կամրջակի շարժաբերի քարտերի փոխարինում /ԿՌԱԶ-255/	հատ	2000
229	Բաշխիչ տուփի դիֆերենցիալի փոխարինում /ԿՌԱԶ-260/	հատ	10000
230	Բաշխիչ տուփի դիֆերենցիալի փոխարինում /ԿՌԱԶ-255, 256/	հատ	5000
231	Դիֆերենցիալի պահուսակի փոխարինում	հատ	3000
232	Դիֆերենցիալի խաչարդի փոխարինում	հատ	2000
233	Դիֆերենցիալի սատելիտի փոխարինում	հատ	1000
234	Բաշխիչ տուփի միջակա լիսեռի փոխարինում	հատ	4000
235	Բաշխիչ տուփի լուսի պոմպի փոխարինում /ԿՌԱԶ-260/	հատ	5000
236	Բաշխիչ տուփի առաջնային լիսեռի փոխարինում	հատ	4000
237	Բաշխիչ տուփի առցանց կամ միջին կամրջակի շարժաբերի լիսեռի փոխարինում /ԿՌԱԶ-260/	հատ	4000
238	Բաշխիչ տուփի հետևի կամ միջին կամրջակի շարժաբերի լիսեռի փոխարինում /ԿՌԱԶ-255, 256/	հատ	4000
239	Բաշխիչ տուփի հզորության հավաքման շարժաբերի լիսեռի փոխարինում /ԿՌԱԶ-260/	հատ	4000
240	Բաշխիչ տուփի համաժամայնի փոխարինում, ներառյալ համաժամայնը	հատ	4000
241	Բաշխիչ տուփի 1 հատ ատամնանիվի փոխարինում	հատ	3000
242	Բաշխիչ տուփի ատամնանիվի 1 հատ ակառնցի փոխարինում	հատ	3000
243	Բաշխիչ տուփի 1 հատ տասիոդակի փոխարինում	հատ	500
244	Բաշխիչ տուփի 1 հատ կցաշրջի փոխարինում	հատ	3500
245	Բաշխիչ տուփի 1 հատ առանցքակալի փոխարինում	հատ	2000
246	Բաշխիչ տուփի 1 հատ երկժանի փոխարինում	հատ	2000
247	Բաշխիչ տուփի ռեզինոտեխնիկական պատրաստվածքների փոխարինում /ԿՌԱԶ-255, 260/	հատ	3500
248	Բաշխիչ տուփի ռեզինոտեխնիկական պատրաստվածքների փոխարինում /ԿՌԱԶ-256/	հատ	2500
249	Բաշխիչ տուփի մաքրում և ներկում /ԿՌԱԶ-255, 260/	հատ	7000
250	Բաշխիչ տուփի մաքրում և ներկում /ԿՌԱԶ-256/	հատ	6000
<b>VIII Կարդանային լիսեռներ</b>			
251	1 հատ կարդանային լիսեռի ապամոնտաժում, մոնտաժում	հատ	5000
252	1 հատ կարդանային լիսեռի մաքրում և ներկում	հատ	5000
253	1 հատ երկժանի-կցաշրջի փոխարինում	հատ	3500
254	1 հատ խաչարդի փոխարինում	հատ	2000
255	Միջանկյալ կարդանային լիսեռի հենարանի բարձակի փոխարինում	հատ	5000
256	Միջանկյալ կարդանային լիսեռի հենարանի կցաշրջի փոխարինում	հատ	4000
257	Միջանկյալ կարդանային լիսեռի հենարանի 1 հատ առանցքակալի փոխարինում	հատ	1000
258	Միջանկյալ կարդանային լիսեռի հենարանի լիսեռի փոխարինում	հատ	2500
259	Կարդանային լիսեռի 1 հատ հեղուկ-մանեկի փոխարինում	հատ	100
<b>IX Առցանց ստեղծ</b>			
260	Առցանց ստեղծի ապամոնտաժում և մոնտաժում /ԿՌԱԶ-256/	հատ	30000
261	Առցանց ստեղծի մաքրում և ներկում /ԿՌԱԶ-256/	հատ	6000
262	1 հատ պտույտի բռունցքի հանում և տեղադրում /ԿՌԱԶ-256/	հատ	5000
263	Պտույտի բռունցքի 1 հատ սննագցի փոխարինում	հատ	1000
264	Ղեկաշրջանակի 1 հատ լծակի փոխարինում	հատ	3000
<b>X Առցանց կամրջակ</b>			
265	Առցանց կամրջակի ապամոնտաժում և մոնտաժում	հատ	35000
266	Առցանց կամրջակի կազմաքանդման, զելման և արատավորման ծառայություն /ԿՌԱԶ-255, 260/	հատ	25000
267	Առցանց կամրջակի մաքրում և ներկում	հատ	15000
268	Առցանց կամրջակի հավաքում	հատ	35000
269	Առցանց կամրջակի քարտերի փոխարինում	հատ	10000
270	Առցանց կամրջակի կիսատնի կցաշրջի փոխարինում	հատ	3500
271	Առցանց կամրջակի 1 հատ առցանց կիսատնի փոխարինում	հատ	4000

272	Առջևի կամրջակի 1 հատ /աջ կամ ձախ/ պտույտի բոռնցքի դարձակի փոխարինում	հատ	10000
273	Առջևի կամրջակի պտույտի բոռնցքի դարձակի 1 հատ միջադիրի փոխարինում	հատ	200
274	Առջևի կամրջակի պտույտի բոռնցքի դարձակի 1 հատ ականցքի փոխարինում	հատ	2500
275	Առջևի կամրջակի 1 հատ հողակապի բոռնցքի փոխարինում	հատ	3000
276	Առջևի կամրջակի 1 հատ հողակապի բոռնցքի սկավառակի փոխարինում	հատ	500
277	Առջևի կամրջակի պտույտի բոռնցքի գնդաձև հենարանի փոխարինում	հատ	6000
278	Առջևի կամրջակի պտույտի բոռնցքի իրանի փոխարինում	հատ	5000
279	Առջևի կամրջակի պտույտի բոռնցքի 1 հատ առանցքակալի փոխարինում	հատ	2000
280	Առջևի կամրջակի պտույտի բոռնցքի 1 հատ լծակի փոխարինում	հատ	2000
281	Առջևի կամրջակի պտույտի բոռնցքի գնդաձև հենարանի 1 հատ միջադիրի փոխարինում	հատ	400
282	Առջևի կամրջակի 1 հատ ներքին կիսասունիի փոխարինում	հատ	4000
283	Առջևի կամրջակի կիսասունիի 1 հատ խցուկի փոխարինում	հատ	1000
284	Առջևի կամրջակի դիֆերենցիայի փոխարինում	հատ	8000
285	Առջևի կամրջակի դիֆերենցիայի 1 հատ բաժակի փոխարինում	հատ	4000
286	Առջևի կամրջակի դիֆերենցիայի 1 հատ սատելիտի փոխարինում	հատ	2000
287	Առջևի կամրջակի դիֆերենցիայի խաչարդի փոխարինում	հատ	2000
288	Առջևի կամրջակի 1 հատ արտաքին առանցքակալի փոխարինում	հատ	2000
289	Առջևի կամրջակի 1 հատ արտաքին առանցքակալի կարգավորման մանեկի փոխարինում	հատ	500
290	Առջևի կամրջակի կիսասունիի 1 հատ առամանիկի փոխարինում	հատ	2000
291	Առջևի կամրջակի գլխավոր փոխանցման /ռեդուկտոր/ քանդում և արատավորում	հատ	20000
292	Առջևի կամրջակի գլխավոր փոխանցման /ռեդուկտորի/ հավաքում	հատ	20000
293	Առջևի կամրջակի գլխավոր փոխանցման /ռեդուկտորի/ փոխարինում	հատ	13000
294	Առջևի կամրջակի գլխավոր փոխանցման /ռեդուկտորի/ քարտերի փոխարինում	հատ	5000
295	Առջևի կամրջակի գլխավոր փոխանցման /ռեդուկտորի/ քարտերի կախարիչի փոխարինում	հատ	2000
296	Առջևի կամրջակի գլխավոր փոխանցման /ռեդուկտորի/ քարտերի կախարիչի միջադիրի փոխարինում	հատ	300
297	Առջևի կամրջակի գլխավոր փոխանցման /ռեդուկտոր/ տանող և տարվող կոնային առամանիկների փոխարինում	հատ	10000
298	Առջևի կամրջակի գլխավոր փոխանցման /ռեդուկտոր/ տանող կոնային առամանիկի լիսեռի փոխարինում /ԿՌԱԶ-260/	հատ	5000
299	Առջևի կամրջակի գլխավոր փոխանցման /ռեդուկտոր/ տանող գլանային առամանիկի փոխարինում	հատ	5000
300	Առջևի կամրջակի գլխավոր փոխանցման /ռեդուկտոր/ տարվող գլանային առամանիկի փոխարինում	հատ	5000
301	Առջևի կամրջակի գլխավոր փոխանցման /ռեդուկտորի/ 1 հատ առանցքակալի փոխարինում	հատ	2000
302	Առջևի կամրջակի գլխավոր փոխանցման /ռեդուկտորի/ 1 հատ հողակապի առանցքակալի փոխարինում	հատ	2000
303	Առջևի կամրջակի գլխավոր փոխանցման /ռեդուկտորի/ կցաշարթի փոխարինում	հատ	3500
304	Առջևի կամրջակի գլխավոր փոխանցման /ռեդուկտորի/ քարտերի միջադիրի փոխարինում	հատ	500
<b>XI Հետևի կամրջակ</b>			
305	Հետևի կամրջակի ապամոնտաժում և մոնտաժում	հատ	35000
306	Հետևի կամրջակի կազմաքանդման, զեղման և արատավորման ծառայություն	հատ	25000
307	Հետևի կամրջակի մաքրում և ներկում	հատ	15000
308	Հետևի կամրջակի հավաքում	հատ	35000
309	Հետևի կամրջակի քարտերի փոխարինում	հատ	10000
310	Հետևի կամրջակի կիսասունիի կցաշարթի փոխարինում	հատ	3500
311	Հետևի կամրջակի կիսասունիի փոխարինում	հատ	4000
312	Հետևի կամրջակի կիսասունիի 1 հատ խցուկի փոխարինում	հատ	1000
313	Հետևի կամրջակի դիֆերենցիայի փոխարինում	հատ	8000
314	Հետևի կամրջակի դիֆերենցիայի 1 հատ բաժակի փոխարինում	հատ	4000
315	Հետևի կամրջակի դիֆերենցիայի 1 հատ սատելիտի փոխարինում	հատ	2000
316	Հետևի կամրջակի դիֆերենցիայի խաչարդի փոխարինում	հատ	2000
317	Հետևի կամրջակի կիսասունիի 1 հատ առամանիկի փոխարինում	հատ	2000

318	Հետևի կամրջակի գլխավոր փոխանցման /ոեղուկտոր/ քանդում և արատավորում	հատ	20000
319	Հետևի կամրջակի գլխավոր փոխանցման /ոեղուկտորի/ հավաքում	հատ	20000
320	Հետևի կամրջակի գլխավոր փոխանցման /ոեղուկտորի/ փոխարինում	հատ	15000
321	Հետևի կամրջակի գլխավոր փոխանցման /ոեղուկտորի/ քարտերի փոխարինում	հատ	5000
322	Հետևի կամրջակի գլխավոր փոխանցման /ոեղուկտորի/ քարտերի կափարիչի փոխարինում	հատ	2000
323	Հետևի կամրջակի գլխավոր փոխանցման /ոեղուկտորի/ քարտերի կափարիչի միջադիրի փոխարինում	հատ	300
324	Հետևի կամրջակի գլխավոր փոխանցման /ոեղուկտոր/ տանող և տարվող կոնային ատամնանիվների փոխարինում	հատ	10000
325	Հետևի կամրջակի գլխավոր փոխանցման /ոեղուկտոր/ տանող կոնային ատամնանիվի լիսեռի փոխարինում /ԿՌԱԶ-260/	հատ	5000
326	Հետևի կամրջակի գլխավոր փոխանցման /ոեղուկտոր/ տանող գլանային ատամնանիվի փոխարինում	հատ	5000
327	Հետևի կամրջակի գլխավոր փոխանցման /ոեղուկտոր/ տարվող գլանային ատամնանիվի փոխարինում	հատ	5000
328	Հետևի կամրջակի գլխավոր փոխանցման /ոեղուկտորի/ 1 հատ առանցքակալի փոխարինում	հատ	2000
329	Հետևի կամրջակի գլխավոր փոխանցման /ոեղուկտորի/ 1 հատ հողովակավոր առանցքակալի փոխարինում	հատ	2000
330	Հետևի կամրջակի գլխավոր փոխանցման /ոեղուկտորի/ կցաշտրթի փոխարինում	հատ	3500
331	Հետևի կամրջակի գլխավոր փոխանցման /ոեղուկտորի/ քարտերի միջադիրի փոխարինում	հատ	500
<b>XII Միջանկյալ կամրջակ</b>			
332	Միջանկյալ կամրջակի ապամոնտաժում և մոնտաժում	հատ	35000
333	Միջանկյալ կամրջակի կազմաքանդման, զեղման և արատավորման ծառայություն	հատ	25000
334	Միջանկյալ կամրջակի մաքրում և ներկում	հատ	15000
335	Միջանկյալ կամրջակի հավաքում	հատ	35000
336	Միջանկյալ կամրջակի քարտերի փոխարինում	հատ	10000
337	Միջանկյալ կամրջակի կիսասունիի կցաշտրթի փոխարինում	հատ	3500
